Արձանագրություն

«ԱՍՍԱԹ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված՝ ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայրի (Կենտրոնական տեղամաս) ժամկետի երկարաձգման, բացահանքի և ստորգետնյա հանքի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման գործընթացների իրականացման (այդ թվում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվության) վերաբերյալ անցկացված հանրային լսման

Հիմք ընդունելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 1325-Ն որոշման (այսուհետ՝ նաև Կառավարության որոշում) պահանջները՝ 2023 թվականի դեկտեմբերի 20-ին, ժամը 12:00-ին ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Քարաբերդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ հանրային քննարկում (լսումներ) «ԱՍՍԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայրի (Կենտրոնական տեղամաս) ժամկետի երկարաձգման, բացահանքի և ստորգետնյա հանքի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման գործընթացների իրականացման (այդ թվում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվության) վերաբերյալ (3-րդ փուլ) (այսուհետ՝ նաև Հանրային քննարկում):

Հանրային քննարկմանը մասնակցում էին՝

- Հանրային քննարկման պատասխանատու՝ ՀՀ, Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի (այսուհետ նաև Համայնք) ղեկավար Սուրեն Կոստանդյանը.
- Հանրային քննարկման վարող՝ ՀՀ, Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Քարաբերդ բնակավայրի վարչական ղեկավար Յուրիկ Շավելյանը.
- Նախատեսվող գործունեության ձեռնարկողի՝ «ԱՍՍԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն, ԱՍՍԱԹ կամ Ձեռնարկող) ներկայացուցիչներ Գագիկ Գևորգյանը, Պերճ Խաչատրյանը.
- Ազդակիր համայնքի բնակիչներ.

(մասնակիցների ցանկը կցվում է սույն արձանագրությանը):

Հանրային քննարկումը վարեց ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Քարաբերդ բնակավայրի վարչական ղեկավար Յուրիկ Շավելյանը:

Հանրային քննարկման ընթացքում հնչեցված ելույթները, դիտողությունները, առաջարկությունները, հարցերը և պատասխանները:

Որպես ազդակիր համայնքի ղեկավար, բացման խոսքով հանդես եկավ Փամբակ համայնքի ղեկավար Ս. Կոստանդյանը, այնուհետև քննարկման վարող Յու. Շավելյանը ներկայացրեց հանրային քննարկման օրակարգը և խոսքը փոխանցեց Ընկերության ներկայացուցիչ Պերճ Խաչատրյանին:

Պերճ Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց հանրային քննարկման պատասխանատուին ու վարողին և հայտնեց, որ հանրային քննարկման 3-րդ փուլն ուղղված է «ԱՍՍԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայրի (Կենտրոնական տեղամաս) ժամկետի երկարաձգման, բացահանքի և ստորգետնյա հանքի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվության դրույթների ներկայացմանը:

Նա նշեց, որ հաշվետվությունը մշակվել է նախորդ հանրային լսումների արդյունքում ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նա հայտնեց, որ սույն լսման շրջանակներում արդեն իսկ ներկայացվել են նախագծային փաստաթղթերը, Շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվությունը, որոնք հասանելի են եղել թե համայնքի պաշտոնական կայքում, թե համայնքի ղեկավարի աշխատակազմի նստավայրի շենքում (թղթային տարբերակը), ուստի համայնքի բնակիչները և այլ շահագրգիռ անձինք հնարավորություն են ունեցել ծանոթանալու դրանց հետ:

Միաժամանակ, Պ. Խաչատրյանը ներկաներին հորդորեց հանդես գալ իրենց հուզող հարցերով, որպեսզի դրանք հաշվի առնվեն Ընկերության գործունեության հետագա նախագծային փաստաթղթերի մշակման և լրամշակման շրջանակներում:

Այնուհետև Պերճ Խաչատրյանը խոսքը փոխանցեց «ԱՍՍԱԹ» ՍՊ ընկերության գլխավոր երկրաբան Գագիկ Գևորգյանին՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվության առանցքային դրույթները ներկայացնելու համար:

Պարոն Գևորգյանը հայտնեց, որ ներկայումս արդյունահանման աշխատանքները կատարվում են բացահանքում, սակայն դրանք պետք է հետագայում շարունակվեն ստորգետնյա եղանակով՝ նախկինում հաստատված նախագծի սահմաններում, որի տևողությունը մինչև 2024 թվականի հունիս ամիսն է, ուստի նախատեսվում է ժամկետի երկարաձգում:

Նա ներկայացրեց Շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվության մեջ ներառված բաժինները, որոնք են՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման նպատակը, Նախատեսվող գործունեության նկարագիրը, Շրջակա միջավայրի ելակետային վիճակի գնահատում, Սոցիալ-տնտեսական բնութագիրը, Շրջակա միջավայրի վրա պոտենցիալ և կանխատեսվող ազդեցության գնահատում, Աղտոտումների մակարդակի նվազեցմանն առաջարկվող միջոցառումների և արտակարգ իրավիճակների ժամանակ գործողությունների ծրագրի գնահատում, Շրջակա միջավայրի մշտադիտարկումների պլան, Բնապահպանական կառավարման պլան:

Պարոն Գևորգյանը հայտնեց, որ հիմնական դրույթը շրջակա միջավայրի ելակետային վիճակի գնահատումն է, քանի որ 2015 թվականից հանքավայրը շահագործվել է և դրա շահագործման հետևանքով բնությանը պատճառված վնասների գնահատման համար այս տարի Ընկերության կողմից կատարվել է մոնիթորինգ, որի արդյունքները ներկայացված են հաշվետվության մեջ:

Նա նաև նշեց, որ Ընկերության կողմից կատարվել է հանքավայրի կենտրոնական տեղամասի՝ աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների հաշվարկ՝ 120 էջ ծավալով աշխատանք:

Բնապահպանական տեսանկյունից պահանջվող նախապես կատարման ենթակա բոլոր միջոցառումներն արված են և ներկայացված են հանրությանը:

Պարոն Գևորգյանն անդրադարձավ նաև «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի և չեխական «Առնիկա» ՀԿ-ի կողմից (այսուհետ՝ ՀԿ-ներ) համատեղ կազմակերպված ծրագրի արդյունքներն ամփոփող թռուցիկների բովանդակությանը և նշեց, որ դրանցում ամփոփված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը:

Նա հավելեց, որ Ընկերության պատվերով իրականացված գործընթացների՝ փորձաքննությունների օրինականությունը հիմնավորող բոլոր փաստաթղթերն առկա են: Սակայն Ընկերության և ՀԿ-ների կողմից կատարված փորձաքննությունների արդյունքներն անհամեմատ տարբեր են:

Գևորգյանը նշեց, որ ՀԿ-ներն իրենց կողմից կատարված հետազոտության նմուշները վերցրել են Փամբակ գետից, որը որևէ առնչություն չունի հանքավայրի տարածքի հետ: Հանքավայրի տարածքից դուրս եկող ջուր չկա:

Հողի փորձանմուշը վերցրել են հանքավայրի տարածքից դուրս գտնվող տարածքներից, ճանապարհներից:

Իսկ Ընկերության կողմից կատարված փորձաքննությունների համար, որպես փորձանմուշ վերցված նյութերի գտնվելու վայրի վերաբերյալ նշումներն ամրագրված են փաստաթղթերով: Դրանք վերցվել են հանքավայրից և դրա հարակից տարածքներից, որտեղ կարող է լինել հնարավոր ազդեցություն: Բոլոր փորձաքննությունների արդյունքում հնարավոր ազդեցությունները գտնվում են թույլատրելի սահմաններում:

ՀԿ-ները նշել են մկնդեղի պարունակության բարձր ցուցանիշի մասին, սակայն Ընկերությանկողմից իրականացված փորձաքննությունների արդյունքներով մկնդեղի պարունակությունը փորձանմուշներում 1000 անգամ ցածր է եղել:

Այս ամենը վկայում է, որ ՀԿ-ները փորձում են խեղաթյուրել իրականությունը:

Ընկերության նախագծային փաստաթղթերով նախատեսվում է հետագա աշխատանքների ժամանակ նույնպես շարունակել բնապահպանական վերահսկողության իրականացումը՝ տարեկան հողի, ջրի և օդի մոնիթորինգի իրականացման միջոցով, որոնց տվյալները հասանելի կլինեն հանրության համար: Այդպիսով նաև կվերահսկվի կատարվող աշխատանքների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և համայնքի բնակչության առողջության վրա:

Գագիկ Գևորգյանն ամփոփեց իր խոսքը և ներկաներին առաջարկեց հարցեր հնչեցնել:

Մասնակիցներից մեկը հայտնեց, որ Ընկերության ներկայացուցիչների հետ համայնքը որևէ խնդիր չունի, քանի որ համայնքում առաջացած ցանկացած հարցի Ընկերությունը պատրաստակամորեն աջակցել է:

Հաշվի առնելով, որ հարցերը և առաջարկությունները սպառված էին, Յու. Շավելյանը Հանրային քննարկումը հայտարարեց ավարտված:

Սույն արձանագրությունը կազմված է երեք օրինակից, հայերեն:

Ստորագրություններ՝

Հանրային քննարկման պատասխանատու՝
ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի
ղեկավար Ս. Կոստանդյան

Հանրային քննարկման վարող՝
ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի
Քարաբերդ բնակավայրի վարչական
ղեկավար Յու. Շավեյան

Հանրային քննարկման արձանագրող՝
Փամբակի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար
Ռ. Մինասյան

Ձեռնարկող՝
«ԱՍՍԱԹ» ՍՊ ընկերություն
Ներկայացուցիչ Պ. Խաչատրյան